



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15**

27 դեկտեմբերի 2023 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանոյանը:  
Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռաիսա Մինասյանը

**Մասնակցում էին՝**

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝  
Սուրեն Կոստանոյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրաայանը, Արայիկ  
Քոչարյանը, Գրիգոր Կարապետյանը, Պավլիկ Պապինյանը և Շուշանիկ Հակոբյանը:  
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝  
Սասուն Մարանոյանը, Սևակ Խաչատրյանը և Նաիրա Հարությունյանը:

**Նիստից բացակայում էր՝**

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝  
Սերյոժա Սարգսյանը, Էմմա Գասպարյանը և Արմենուհի Ոսկանյանը:  
«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Թիանա  
Բոջուկյանը:

**Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 11 անդամ**

**ՆԻՍՏԸ** - Նիստը վարող Սուրեն Կոստանոյանը ժամը 13.00-ին նիստը հայտարարեց  
բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել  
որպես լրացուցիչ 7-11-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող տնակները նվիրաբերելու մասին:

գեղ. Ռ. Մինասյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող նախկին մանկապարտեզի շենքը վարձակալությամբ տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Փամբակ համայնքի սեփականության 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

զեկ. Տ. Անտինյան

10. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով հատկացնելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և վարձակալության պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

**Քվեարկությամբ, կողմ՝ 11 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:**

**Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:  
Քվեարկությամբ, կողմ՝ 11 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 147-Ա/:**

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.  
Հաստատված օրակարգը՝**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 15 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ա. Կոստանյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

3. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:

զեկ. Ա. Կոստանդյան

7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող տնակները նվիրաբերելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող նախկին մանկապարտեզի շենքը վարձակալությամբ տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Փամբակ համայնքի սեփականության 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

զեկ. Տ. Անտինյան

10. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով հատկացնելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և վարձակալության պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

11. Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

## ԸՆԹԱՑՔԸ՝

**1. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի եկամտային մասը կազմում է 681915.7 հազար դրամ, որից հարկեր և տուրքեր՝ 99362,2 հազ. դրամ, պաշտոնական դրամաշնորհներ /դոտացիա/ 514464,7 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 68088.8 հազ. դրամ, որից՝ գույքի վարձակալություն՝ 13980.0 հազ. դրամ, վարչական գանձումներ՝ 19996.0 հազ. դրամ, այլ եկամուտներ՝ 10900.0 հազ. դրամ:

Ընդամենը եկամուտներ այդ թվում՝	681915.7 հազար դրամ
• Վարչական բյուջեի մասով	673702.9 հազար դրամ
• Ֆոնդային բյուջեի մասով	132533,0 հազար դրամ

Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսերը կազմում է.

Ընդամենը ծախսեր այդ թվում	681915,7 հազար դրամ
• Վարչական բյուջեի մասով	673702,9 հազար դրամ
• Ֆոնդային բյուջեի մասով	132533.0 հազար դրամ

Փամբակ համայնքի 2024թ-ի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման բաշխվել են հետևյալ կերպ.

1. Ընացիկ՝ վարչական ծախսեր կազմում է 549382.7 հազար դրամ.

Աշխատողների, աշխատավարձեր և հավելավճարներ հադվածով նախատեսվել է 190454.2 հազար դրամ: Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար նախատեսվել է 78168.0 հազ. դրամ: Դրամաշնորհ Փամբակ համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ներին՝ 234299.5 հազ. դրամ: Սոցիալական նպաստներ համայնքի անապահով ընտանիքներին՝ 6000.0 հազ. դրամ: Այլ ծախսեր՝ 40461.0 հազ. դրամ, որի մեջ մտնում է նաև պահուստային ֆոնդը՝ 35188.0 հազ. դրամ, որը հետագայում կօգտագործվի ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և բյուջեով չնախատեսված ծախսերի համար:

2. Կապիտալ՝ ֆոնդային ծախսերը կազմում է 132533.0 հազ. դրամ.

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգումով նախատեսվել է 44896.7 հազար դրամ, շենքերի և շինությունների շինարարության համար նախատեսվել է 109596.3 հազ. դրամ, այլ հիմնական միջոցներ՝ 1040.0 հազ. դրամ, մեքենաներ և սարքավորումներ՝ 2000.0 հազ. դրամ: Տարբերություն 25000.0 հազ. դրամը նախատեսված է հողի օտարումից որպես մուտք, այդ պատճառով էլ ընդամենը ֆոնդային ծախսերում թվային չի արտացոլվում: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 148-Ն/:**

**2. ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 21.11.2023թ. թիվ 117 դրական եզրակացությունը, առաջարկվում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-019-0101-

0027 կադաստրային ծածկագրով 8,74002 հա մակերեսով, 06-019-0101-0025 կադաստրային ծածկագրով 4,415282 հա մակերեսով և 06-019-0101-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,186189 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերը, Արջուտի ոսկու հանքավայրի գործարանի ենթակառուցվածքների շինարարության և սանիտարապաշտպանիչ գոտու ստեղծման նպատակով, փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողերի:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 149-Ա/:**

**3. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող PAZ 672M մակնիշի 682CN61 հաշվառման համարանիշի ավտոբուսը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 150-Ա/:**

**4. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող ZIL մակնիշի 284 LL 70 հաշվառման համարանիշի աղբատար մեքենան:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 151-Ա/:**

**5. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող տնակները նվիրաբերելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Վահագնի գյուղի վարչական ղեկավար Սուրեն Վարդումյանի զեկուցագիրը, Վահագնի գյուղի բնակիչների դիմումները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվիրաբերության առարկա հանդիսացող հիմնական միջոցները /փայտաշեն տնակները/ 1988թ-ից փաստացի օգտագործվում և տնօրինվում են ներքոնշյալ բնակիչների կողմից, ինչպես նաև տնակների ամորտիզացիոն՝ մաշվածության ժամկետը 20 տարուց ավել է, առաջարկվում է տալ համաձայնություն Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերով առկա, համայնքային սեփականություն հանդիսացող, շահագործման ժամկետը անցած, 35 և ավելի տարվա վաղեմություն ունեցող թվով 17 տնակները փաստացի տնօրինող՝ Վահագնի գյուղի ներքոնշյալ բնակիչներին անհատույց նվիրաբերելուն:

- 1) Աղունիկ Ներսիսյան
- 2) Ֆյոդոր Սահակյան
- 3) Էրիկ Կիրակոսյան
- 4) Խաչիկ Քոչինյան
- 5) Նաիրա Կոստանյան
- 6) Վարդան Քոչինյան
- 7) Զեփյուռ Կիրակոսյան
- 8) Արթուր Աբրահամյան
- 9) Վահե Քոչինյան
- 10) Նվեր Սարգսյան
- 11) Գեղանուշ Սուքիասյան
- 12) Աշոտ Ներսեսյան
- 13) Աշոտ Վարդումյան
- 14) Լարիսա Քոչինյան
- 15) Աշոտ Զաքարյան
- 16) Արմեն Մոսինյան
- 17) Կամո Բուլղադարյան

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 152-Ա/:**

**6. ԼՍԵՑԻՆ** - Համայնքային սեփականություն հանդիսացող նախկին մանկապարտեզի շենքը վարձակալությամբ տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի ղեկավարին է դիմել Արեն Սարգսի Ղումաշյանը՝ սպորտ դահլիճ շահագործելու նպատակով տարածք հատկացնելու խնդրանքով: Առաջարկվում է տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի նախկին մանկապարտեզի շենքի երկրորդ հարկից 49,85 քմ սպորտդպրոց շահագործելու նպատակով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ Արեն Սարգսի Ղումաշյանին օգտագործման տրամադրելուն: Տարածքի վարձակալության ընդհանուր արժեքը մեկ տարվա համար սահմանվում է 30000/երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 153-Ա/:**

**7. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականության 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջին կարգի մասնագետ Տաթևիկ Անտինյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2023 թվականի գույքագրման արդյունքները.

Շենքեր 553 067 891 ՀՀ դրամ արժողությամբ

Շինություններ 2 052 018 336 դրամ արժողությամբ

Այլ հիմնական միջոցներ 32 217 563

Սարքեր, սարքավորումներ 33 337 040

Տնտեսական գույք 86 240 791

Տեխնիկա /մեքենասարքավորումներ/ 216 962 400

Գրականության ֆոնդ 4 039 390

Սպորտային գույք 4 705 500

Թանգարանի գույք 500 000

Արագամաշ առարկաներ 239 955

Դուրս գրված գույք /մասնագիտական/ 3 077 087

Դուրս գրված գույք /ոչ մասնագիտական/ 5 473 922

Նշվեց, որ գույքագրման ընթացքում պակասորդ և ավելցուկ չի հայտնաբերվել:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 154-Ա/:**

**8. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն և վարձակալության իրավունքով հատկացնելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և վարձակալության պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է տալ համաձայնություն 7 լոտ հողամասերը աճուրդ վաճառքով օտարելուն և 1 լոտ հողամասը վարձակալության իրավունքով հատկացնելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 155-Ա/:**

**9. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռախսա Մինասյանը: Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետը, սահմանել Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 156-Ա/:**



**10. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2024 թվականի փետրվարի 15-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

**Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 157-Ա/:**

Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի փետրվարի 15-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 147-Ա  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2023 թ-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 15 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023 թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 15 հերթական նիստի օրակարգը:  
ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023 թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 15 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին:
3. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
4. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:
5. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը ամրացնելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:
7. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող տնակները նվիրաբերելու մասին:
8. Համայնքային սեփականություն հանդիսացող նախկին մանկապարտեզի շենքը վարձակալությամբ տրամադրելու մասին:
9. Փամբակ համայնքի սեփականության 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

10. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները եվ աճուրդի պայմանները հաստատելու մասին:

11. Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:


Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 148-Ն  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ԽԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024  
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ Փամբակ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի 2024թ-ի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

1) Եկամուտների գծով ընդամենը - 681915700 /վեց հարյուր ութսունմեկ միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,  
այդ թվում՝

ա. Վարչական բյուջեի մասով - 673702900 /վեց հարյուր յոթանասուներեք միլիոն յոթ հարյուր երկու հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ.

բ. Ֆոնդային բյուջեի մասով - 132533000 /մեկ հարյուր երեսուներկու միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար/ ՀՀ դրամ.

2) Ծախսերի գծով ընդամենը - 681915700 /վեց հարյուր ութսունմեկ միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ՝  
այդ թվում.

ա. Վարչական բյուջեի մասով - 673702900 /վեց հարյուր յոթանասուներեք միլիոն յոթ հարյուր երկու հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ.

բ. Ֆոնդային բյուջեի մասով - 132533000 /մեկ հարյուր երեսուներկու միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար/ ՀՀ դրամ:

2. Փամբակ համայնքի 2024թ-ի բյուջեի նախագծի կազմման  
ժամանակահատվածում բյուջեի դեֆիցիտ (պակասուրդ) կամ հավելուրդ չի առաջացել:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև: Սահմանել, որ

փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել համայնքի բյուջեով նախատեսված ընդամենը ծախսերի 15 %-ը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

Կողմ -11

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ

### 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ


#### Հաստատված է Փամբակ համայնքի

(քաղաքային, գյուղական համայնքի անվանումը)

ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 148-Ն որոշմամբ

(ամիս, ամսաթիվ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

(Անուն, ազգանուն, հայրանուն)

Հատված 1  
Համայնքի բյուջեի եկամուտները

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)		681915.70	673702.900	132533.000
1100	այդ թվում՝ 1.ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150)	7100	99362.20	99362.2	X
1110	այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112 + տող 1113)	7131	35075.00	35075.0	X
1111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների		200.00	200.0	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		2000.00	2000.0	X
1113	Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ		32875.00	32875.0	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	59380.20	59380.2	X
1121	այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար		59380.2	59380.2	X
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307)	7145	4907.0	4907.0	X
11301	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների		250.0	250.0	X
11302	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման,		0.00		X
11303	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների		0.0	0.0	X
11304	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում, խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար		1400.0	1400.0	X
11305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հետքերի վաճառքի թույլտվության համար		30.0	30.0	X
11306	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում		0.00		X
11307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի		2200.0	2200.0	X
11308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում		0.00		X

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
11309	Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		200.0	200.0	X
11310	Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար		430.0	430.0	X
11311	Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային		0.00		X
11312	Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում		77.00	77.00	X
11313	Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (գինանշան, անվանում և		300.00	300.00	X
11314	Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար		0.00		X
11315	Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության		0.00		X
11316	Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման		0.00		X
11317	Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն		0.00	0.00	X
11318	Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար		20.00	20.00	X
11319	Այլ տեղական տուրքեր		0.00		X
1140	1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝	7146	0.00	0.00	X
1141	Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ,		0.00		X
1142	Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով		0.00		X
1150	1.5 Այլ հարկային եկամուտներ (տող 1151 + տող 1155 ), այդ թվում՝	7161	0.00	0.00	X
1151	Օրենքով պետ. բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների		0.00		X
1152	Եկամտային հարկ		0.00		X
1153	Շահութահարկ		0.00		X
1154	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ		0.00		X
1155	Հողի հարկի, գույքահարկի և անշարժ գույքի հարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում		0.00		X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԴԱՄԱՇՆՈՐՆՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260)	7300	514464.70	514464.70	0.00



Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1210	2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից,	7311	0.00	0.00	X
1211	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ		0.00		X
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	7312	0.00	X	0.00
1221	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ		0.00	X	
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային	7321	0.00	0.00	X
1231	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.00		X
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային	7322	0.00	X	0.00
1241	Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով		0.00	X	
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող	7331	514464.7	514464.7	X
1251	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		514464.7	514464.7	X
1252	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1253 + տող 1254) այդ թվում՝		0.000	0.000	X
1253	Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի		0.000		X
1254	Այլ դոտացիաներ		0.000	0.000	X
1255	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.00		X
1256	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող		0.00	0.00	X
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ	7332	0.00	X	0.00
1261	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		0.00	X	0.00
1262	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող		0.00	X	
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 +	7400	68088.80	59876.00	132533.00
1310	3.1 Տոկոսներ այդ թվում՝	7411	0.00	X	0.00
1311	Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների		0.00	X	
1320	3.2 Շահաբաժիններ	7412	0.00	0.00	X
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող		0.00		X

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334)	7415	13980.0	13980.0	X
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ		12400.0	12400.0	X
1332	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության		0.00		X
1333	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող		0.00		X
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		1580.0	1580.0	X
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	0.00	0.00	X
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրագուրկ, համայնքին որպես սեփականություն		0.00		X
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված յազոբությունների		0.00		X
1343	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի		0.00		X
1350	3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում՝	7422	19996.0	19996.0	X
1351	Տարագան վճարներ (տող 13501+տող 13502+տող 13503+տող 13504+տող 13505+տող 13506+տող 13507+տող 13508+տող 13509+տող 13510+տող 13511+տող 13512+տող 13513+տող 13514+տող 13515+տող 13516+տող 13517+տող 13518+տող 13519+տող 13520)		15996.0	15996.0	X
13501	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ		400.0	400.0	X
13502	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության		0.0	0.0	X
13503	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն		1000.0	1000.0	X
13504	Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և		0.00	0.00	X
13505	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար		600.00	600.00	X
13506	Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար		0.00	0.00	X
13507	Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար		5000.0	5000.0	X
13508	Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր		0.00	0.00	X
13509	Կենտրոնացված ջեռուցման համար		0.00		X
13510	Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ		1000.00	1000.00	X
13511	Ռոտզման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն		0.00		X
13512	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության		0.00		X
13513	Համայնքային ենթակառուցվածքի մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար		6120.00	6120.00	X

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
13514	Համայնքային ենթակայության արտադարձական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար		1476.00	1476.00	X
13515	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար		0.0	0.0	X
13516	Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և		0.0		X
13517	Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և		0.0		X
13518	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար		0.0		X
13519	Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց		400.0	400.0	X
13520	Այլ տեղական վճարներ		0.0		X
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման		4000.0	4000.0	X
1353	Համայնքի բյուջե մուտքագրվող այլ վարչական գանձումներ		0.00		X
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362)	7431	0.00	0.00	X
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից		0.00		X
1362	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից		0.00		X
1370	3.7 Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված ընթացիկ	7441	15000.0	15000.0	X
1371	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա		0.0		X
1372	Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից		15000.0	15000.0	X
1380	3.8 Համայնքի բյուջե մուտքագրվող այլ կատեգորիաներում չդասակարգված կապիտալ	7442	8212.80	X	8212.80

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1381	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին		4512.80	X	4512.80
1382	Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական		3700.00	X	3700.00
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393)	7452	10900.000	10900.000	124320.20
1391	այդ թվում՝ Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր		0.00	X	
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		124320.200	X	124320.200
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ		10900.000	10900.000	

## ՀԱՏՎԱԾ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ

(հազար դրամներով)

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ա.7+ա.8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2000	X	X	X	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>	681915.7000	673702.9000	132533.0000
2100	01	0	0	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ</b>	302949.2000	267832.2000	35117.0000
				<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>	239804.2	237804.2	2000.0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	239804.2	237804.2	2000.00
2112	01	1	2	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	0.0000		
2113	01	1	3	Արտաքին հարաբերություններ	0.0000		
2120	01	2	0	<i>Արտաքին տնտեսական օգնություն</i>	0.0000	0.0000	0.0000
2121	01	2	1	Արտաքին տնտեսական աջակցություն	0.0000		
2122	01	2	2	Միջազգային կազմակերպությունների միջոցով տրամադրվող տնտեսական օգնություն	0.0000		
2130	01	3	0	<i>Ընդհանուր բնույթի ծառայություններ</i>	828.0000	828.0000	0.0000
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	0.0000		
2132	01	3	2	Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	0.0000		
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	828.0000	828.0000	
2140	01	4	0	<i>Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք</i>	0.0000	0.0000	0.0000
2141	01	4	1	Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	0.0000		
2150	01	5	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ</i>	0.0000	0.0000	0.0000
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		
2160	01	6	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)</i>	62317.0000	29200.0000	33117.0000
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	62317.0000	29200.0000	33117.0000
2170	01	7	0	<i>Պետական պարտքի գծով գործառնություններ</i>	0.0000	0.0000	0.0000
2171	01	7	1	Պետական պարտքի գծով գործառնություններ	0.0000		
2180	01	8	0	<i>Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող բնօրինակային բնույթի տրամադրություններ</i>	0.0000	0.0000	0.0000
2181	01	8	1	Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող բնօրինակային բնույթի տրամադրություններ	0.0000	0.0000	0.0000
2182	01	8	1	- որամաշնորհներ ՀՀ պետական բյուջեին	0.0000		
2183	01	8	1	- որամաշնորհներ ՀՀ այլ համայնքների բյուջեներին	0.0000		
2184	01	8	1	այդ թվում՝ Երևանի համաքաղաքային ծախսերի ֆինանսավորման համար	0.0000		
2200	02	0	0	<b>ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	0.0000	0.0000	0.0000
2210	02	1	0	<i>Ռազմական պաշտպանություն</i>	0.0000	0.0000	0.0000
2211	02	1	1	Ռազմական պաշտպանություն	0.0000		
2220	02	2	0	<i>Քաղաքացիական պաշտպանություն</i>	0.0000	0.0000	0.0000
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	0.0000	0.0000	
2230	02	3	0	<i>Արտաքին ռազմական օգնություն</i>	0.0000	0.0000	0.0000
2231	02	3	1	Արտաքին ռազմական օգնություն	0.0000		
2240	02	4	0	<i>Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում</i>	0.0000	0.0000	0.0000
2241	02	4	1	Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում	0.0000		
2250	02	5	0	<i>Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</i>	0.0000	0.0000	0.0000
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	0.0000		
2300	03	0	0	<b>ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>	0.0000	0.0000	0.0000
2310	03	1	0	<i>Հասարակական կարգ և անվտանգություն</i>	0.0000	0.0000	0.0000
2311	03	1	1	Ոստիկանություն	0.0000		
2312	03	1	2	Ազգային անվտանգություն	0.0000		
2313	03	1	3	Պետական պահպանություն	0.0000		

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ա.7+ա.8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2320	03	2	0	Փրկարար ծառայություն	0.0000	0.0000	0.0000
2321	03	2	1	Փրկարար ծառայություն	0.0000		
2330	03	3	0	Դատական գործունեություն և հրամանան պաշտպանություն	0.0000	0.0000	0.0000
2331	03	3	1	Դատարաններ	0.0000		
2332	03	3	2	Իրավական պաշտպանություն	0.0000		
2340	03	4	0	Դատախազություն	0.0000	0.0000	0.0000
2341	03	4	1	Դատախազություն	0.0000		
2350	03	5	0	Կայանավայրեր	0.0000	0.0000	0.0000
2351	03	5	1	Կայանավայրեր	0.0000		
2360	03	6	0	Հետազոտական ու նախագծային աշխատանքներ հաստատական կարգի և անվտանգության ոլորտում	0.0000	0.0000	0.0000
2361	03	6	1	Հետազոտական ու նախագծային աշխատանքներ հասարակական կարգի և անվտանգության ոլորտում	0.0000		
2370	03	7	0	Հասարակական կարգ և անվտանգություն (այլ դասերին ստատիստիկ)	0.0000	0.0000	0.0000
2371	03	7	1	Հասարակական կարգ և անվտանգություն (այլ դասերին չպատկանող)	0.0000		
2400	04	0	0	<b>ՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	39339.7000	2600.0000	36739.7000
2410	04	1	0	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	0.0000	0.0000	0.0000
2411	04	1	1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	0.0000		
2412	04	1	2	Աշխատանքի հետ կապված ընդհանուր բնույթի հարաբերություններ	0.0000		
2420	04	2	0	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	100.0000	100.0000	0.0000
2421	04	2	1	Գյուղատնտեսություն	100.0000	100.0000	0.0000
2422	04	2	2	Անտառային տնտեսություն	0.0000		
2423	04	2	3	Ձկնորսություն և որսորդություն	0.0000		
2424	04	2	4	Ոռոգում	0.0000		
2430	04	3	0	Վառելիք և էներգետիկա	19652.0000	0.0000	19652.0000
2431	04	3	1	Քարածուխ և այլ կարծր բնական վառելիք	0.0000		
2432	04	3	2	Նավթամթերք և բնական գազ	19652.0000	0.0000	19652.0000
2433	04	3	3	Միջուկային վառելիք	0.0000		
2434	04	3	4	Վառելիքի այլ տեսակներ	0.0000		
2435	04	3	5	Բլեկտրաէներգիա	0.0000		
2436	04	3	6	Ոչ էլեկտրական էներգիա	0.0000		
2440	04	4	0	Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն	0.0000	0.0000	0.0000
2441	04	4	1	Հանքային ռեսուրսների արդյունահանում, բացառությամբ բնական մառէնի	0.0000		
2442	04	4	2	Արդյունաբերություն	0.0000		
2443	04	4	3	Շինարարություն	0.0000		
2450	04	5	0	Տրանսպորտ	44587.7000	2500.0000	42087.7000
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	44587.7000	2500.0000	42087.7000
2452	04	5	2	Ջրային տրանսպորտ	0.0000		
2453	04	5	3	Երկաթուղային տրանսպորտ	0.0000		
2454	04	5	4	Օդային տրանսպորտ	0.0000		
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	0.0000		
2460	04	6	0	Կապ	0.0000	0.0000	0.0000
2461	04	6	1	Կապ	0.0000		
2470	04	7	0	Այլ բնագավառներ	0.0000	0.0000	0.0000
2471	04	7	1	Մեծածախ և մանրածախ առևտուր, ապրանքների պահպանում և շահեկանություն	0.0000		
2472	04	7	2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	0.0000		
2473	04	7	3	Ջրուսաշրջություն	0.0000		
2474	04	7	4	Զարգացման բազմապատասխան ծրագրեր	0.0000		
2480	04	8	0	Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000	0.0000	0.0000
2481	04	8	1	Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի հարցերի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		
2482	04	8	2	Գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և որսորդության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ա.7+ա.8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2483	04	8	3	Վառելիքի և էներգետիկայի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		0.0000
2484	04	8	4	Լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		
2485	04	8	5	Տրանսպորտի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		0.0000
2486	04	8	6	Վապի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		
2487	04	8	7	Այլ բնագավառների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		
2490	04	9	0	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-25000.0000	0.0000	-25000.0000
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-25000.0000		-25000.0000
2500	05	0	0	<b>ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	96870.5000	96870.5000	0.0000
2510	05	1	0	Աղբահանում	96870.5000	96870.5000	0.0000
2511	05	1	1	Աղբահանում	96870.5000	96870.5000	0.0000
2520	05	2	0	Կեղտաջրերի հեռացում	0.0000	0.0000	0.0000
2521	05	2	1	Կեղտաջրերի հեռացում	0.0000		
2530	05	3	0	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	0.0000	0.0000	0.0000
2531	05	3	1	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	0.0000		
2540	05	4	0	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	0.0000	0.0000	0.0000
2541	05	4	1	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	0.0000		
2550	05	5	0	Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000	0.0000	0.0000
2551	05	5	1	Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0000		
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	0.0000	0.0000	0.0000
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	0.0000	0.0000	
2600	06	0	0	<b>ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ</b>	43409.3000	6073.0000	37336.3000
2610	06	1	0	Բնակարանային շինարարություն	0.0000	0.0000	0.0000
2611	06	1	1	Բնակարանային շինարարություն	0.0000		
2620	06	2	0	Համայնքային զարգացում	500.0000	500.0000	0.0000
2621	06	2	1	Համայնքային զարգացում	500.0000	500.0000	
2630	06	3	0	Ջրամատակարարում	14649.5000	73.0000	14576.5000
2631	06	3	1	Ջրամատակարարում	14649.5000	73.0000	14576.5000
2640	06	4	0	Փողոցների լուսավորում	27759.8000	5000.0000	22759.8000
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	27759.8000	5000.0000	22759.8000
2650	06	5	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	500.0000	500.0000	0.0000
2651	06	5	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	500.0000	500.0000	0.0000
2660	06	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	0.0000	0.0000	0.0000
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	0.0000		
2700	07	0	0	<b>ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</b>	250.0000	250.0000	0.0000
2710	07	1	0	Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	250.0000	250.0000	0.0000
2711	07	1	1	Դեղագործական ապրանքներ	250.0000	250.0000	
2712	07	1	2	Այլ բժշկական ապրանքներ	0.0000		
2713	07	1	3	Բժշկական սարքեր և սարքավորումներ	0.0000		
2720	07	2	0	Արտահիվանդանոցային ծառայություններ	0.0000	0.0000	0.0000
2721	07	2	1	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	0.0000		
2722	07	2	2	Մասնագիտացված բժշկական ծառայություններ	0.0000		
2723	07	2	3	Ստոմատոլոգիական ծառայություններ	0.0000		
2724	07	2	4	Պարաբժշկական ծառայություններ	0.0000		
2730	07	3	0	Հիվանդանոցային ծառայություններ	0.0000	0.0000	0.0000

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ա.7+ա.8)	այդ թվում՝	
						վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8
2731	07	3	1	Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ	0.0000		
2732	07	3	2	Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ	0.0000		
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	463900	0.0000	0.0000	
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող	481900	0.0000	0.0000	
2850	08	5	0	Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		0.0000	0.0000	0.0000
2851	08	5	1	Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ		0.0000		
2860	08	6	0	Հանգստի, մշակույթի և կրոնի (այլ դասերին չպատկանող)		0.0000	0.0000	0.0000
2861	08	6	1	Հանգստի, մշակույթի և կրոնի (այլ դասերին չպատկանող)		0.0000		0.0000
				-Շենքերի և շինությունների շինարարություն	511200	0.0000		0.0000
				-Ոչ-նյութական հիմնական միջոցներ	513200	0.0000		0.0000
2900	09	0	0	Կրթություն		95987.0000	72647.0000	23340.0000
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն		93987.0000	70647.0000	23340.0000
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն		93987.0000	70647.0000	23340.0000
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	463700		70647.0000	
				-Պարտադիր վճարներ	482300	0.0000	0.0000	
				Բ, ՈՉ-ՖԻՆԱՆՍԱՎԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	463701	23340.0000		23340.0000
				Այլ կապիտալ դրամաշնորհներ	465700	0.0000	0.0000	
				-Շենքերի և շինությունների կառուցում	511200	20196.0000		20196.0000
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300	2874.0000		2874.0000
				-Նախագծահետազոտական ծախսեր	513400	270.0000		270.0000
2912	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն		0.0000		
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն		2000.0000	2000.0000	0.0000
				Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ	465500	0.0000	0.0000	
2921	09	2	1	Ֆինանսական ընդհանուր կրթություն		0.0000		
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն		2000.0000	2000.0000	
				-Հատուկ նպատակային այլ նյութեր		1500.0000	1500.0000	
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	463700	500.0000	500.0000	
2930	09	3	0	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն		0.0000	0.0000	0.0000
2931	09	3	1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն		0.0000		
2932	09	3	2	Միջին մասնագիտական կրթություն		0.0000	0.0000	
2940	09	4	0	Բարձրագույն կրթություն		0.0000	0.0000	0.0000
2942	09	4	2	Յետբուհական մասնագիտական կրթություն		0.0000		
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն		0.0000	0.0000	0.0000
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		0.0000	0.0000	0.0000
				Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	463700	0.0000	0.0000	
				-Մասնագիտական ծառայություններ	424100	0.0000		
				-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	511300	0.0000		0.0000
				-Նախագծահետազոտական ծախսեր	513400	0.0000		0.0000
2952	09	5	2	Լրացուցիչ կրթություն		0.0000		

Տողի NN	Բա- ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը (ս.7 +ս.8)	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5		6	7	8
2960	09	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		0.0000	0.0000	0.0000
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		0.0000	0.0000	
2970	09	7	0	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0.0000	0.0000	0.0000
2971	09	7	1	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0.0000		
2980	09	8	0	Կրթություն (այլ դասերին չպատկանող)		0.0000	0.0000	0.0000
2981	09	8	1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)		0.0000		
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԼՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ		3500.0000	3500.0000	0.0000
3010	10	1	0	Վատառողջություն և անաշխատունակություն		0.0000	0.0000	0.0000
3011	10	1	1	Վատառողջություն		0.0000		
3012	10	1	2	Անաշխատունակություն		0.0000		
3020	10	2	0	Ծերություն		0.0000	0.0000	0.0000
3021	10	2	1	Ծերություն		0.0000		
3030	10	3	0	Հարազատին կորցրած անձինք		1000.0000	1000.0000	0.0000
3031	10	3	1	Հարազատին կորցրած անձինք		1000.0000	1000.0000	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	1000.0000	1000.0000	
3040	10	4	0	Ընտանիքի անդամներ և զավակներ		0.0000	0.0000	0.0000
3041	10	4	1	Ընտանիքի անդամներ և զավակներ		0.0000	0.0000	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	0.0000	0.0000	
3050	10	5	0	Գործազրկություն		0.0000	0.0000	0.0000
3051	10	5	1	Գործազրկություն		0.0000	0.0000	
3060	10	6	0	Բնակարանային ապահովում		0.0000	0.0000	0.0000
3061	10	6	1	Բնակարանային ապահովում		0.0000		
3070	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		2500.0000	2500.0000	0.0000
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		2500.0000	2500.0000	
				-Այլ նպաստներ բյուջեից	472900	2500.0000	2500.0000	
3080	10	8	0	Սոցիալական պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0.0000	0.0000	0.0000
3081	10	8	1	Սոցիալական պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0.0000		
3090	10	9	0	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		0.0000	0.0000	0.0000
3091	10	9	1	Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		0.0000		
3092	10	9	2	Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		0.0000		
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՅՈՒՄՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110)		35188.0000	159508.2000	0.0000
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ		35188.0000	159508.2000	0.0000
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		35188.0000	159508.2000	0.0000
				-Պահուստային միջոցներ	489100	35188.0000	159508.2000	



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 149-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 21.11.2023թ. թիվ 117 դրական եզրակացությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Արջուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-019-0101-0027 կադաստրային ծածկագրով 8,74002 հա մակերեսով, 06-019-0101-0025 կադաստրային ծածկագրով 4,415282 հա մակերեսով և 06-019-0101-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,186189 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերը, Արջուտի ոսկու հանքավայրի գործարանի ենթակառուցվածքների շինարարության և սանիտարապաշտպանիչ գոտու ստեղծման նպատակով, փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության արդյունաբերության օբյեկտների գործառնական նշանակության հողերի:

2. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակության իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

- Կողմ -11
- ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
- ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
- ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ
- ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ
- ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ
- ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ
- ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ
- ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ
- ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ
- ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ
- ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
- Դեմ -0
- Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 150-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆԺԱՄԿԵՏ,  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՓԱՄԲԱԿ ԿՈՄՈՒՆԱԼ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՄՐԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Պետական ոչ  
առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ  
հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ  
համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ  
առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն  
իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով  
ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող PAZ 672M մակնիշի 682CN61  
հաշվառման համարանիշի ավտոբուսը:

2. Վերը նշված գույքի պահպանման և շահագործման ծախսերն  
իրականացնել «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի միջոցներով:

3. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա  
նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել կամ հանձնել անհատույց  
օգտագործման:

4. «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ն իրավունք ունի իրեն ամրագրված գույքը  
Փամբակ համայնքի անունից հանձնել վարձակալության, որի ժամկետը չի կարող  
սահմանվել 1 տարուց ավելի:

5. Սույն որոշում ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 151-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքի սեփականություն հանդիսացող ZIL մակնիշի 284 LL 70 հաշվառման համարանիշի աղբատար մեքենան:

2. Վերը նշված գույքի պահպանման և շահագործման ծախսերն իրականացնել «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» ՀՈԱԿ-ի միջոցներով:

3. «Մարգահովիտի բարեկարգում և սպասարկում» ՀՈԱԿ-ն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել կամ հանձնել անհատույց օգտագործման:

4. Սույն որոշում ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ -11  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք

ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 152-Ա

#### ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՆԱԿՆԵՐԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 605-րդ հոդվածով, ՀՀ «Հարկային օրենսգրքի» 121-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով, հիմք ընդունելով Վահագնի գյուղի վարչական ղեկավար Սուրեն Վարդումյանի զեկուցագիրը, Վահագնի գյուղի բնակիչների դիմումները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվիրաբերության առարկա հանդիսացող հիմնական միջոցները /փայտաշեն տնակները/ 1988թ-ից փաստացի օգտագործվում և տնօրինվում են ներքոնշյալ բնակիչների կողմից, ինչպես նաև տնակների ամրոտիզացիոն՝ մաշվածության ժամկետը 20 տարուց ավել է, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերով առկա, համայնքային սեփականություն հանդիսացող, շահագործման ժամկետը անցած, 35 և ավելի տարվա վաղեմություն ունեցող թվով 17 տնակները փաստացի տնօրինող՝ Վահագնի գյուղի ներքոնշյալ բնակիչներին անհատույց նվիրաբերելուն:

- 1) Աղունիկ Ներսիսյան
- 2) Ֆյոդոր Սահակյան
- 3) Էրիկ Կիրակոսյան
- 4) Խաչիկ Քոչինյան
- 5) Նաիրա Կոստանյան
- 6) Վարդան Քոչինյան
- 7) Զեփյուռ Կիրակոսյան
- 8) Արթուր Աբրահամյան
- 9) Վահե Քոչինյան
- 10) Նվեր Սարգսյան
- 11) Գեղանուշ Սուքիասյան
- 12) Աշոտ Ներսեսյան
- 13) Աշոտ Վարդումյան
- 14) Լարիսա Քոչինյան
- 15) Աշոտ Զաքարյան
- 16) Արմեն Մոսինյան
- 17) Կամո Բուլղադարյան

2. Համայնքի ղեկավարին՝ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություն և վերոնշյալ 17 տնակները հանել համայնքի հաշվեկշիղ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ


ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

*Հանրային  
արժանատի  
հասկացողություն*

**ՋԵԿՈՒՑԱԳԻՐ**

**21 դեկտեմբեր 2023թ.**

**ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻՆ**

### **Թույլտվության վերաբերյալ**

Պարոն Կոստանդյան.

Հայտնում եմ Ձեզ, որ Փամբակ համայնքի Վահագնի գյուղում 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակիչներին՝ որպես ժամանակավոր կացարան, համայնքապետարանի կողմից տրամադրվել է 17 փայտե տնակ: Ժամանակի ընթացքում այդ տնակները կոռոզիայի հետևանքով դարձել են բնակության համար ոչ պիտանի: Այժմ վերոնշյալ բնակիչները դիմել են ինձ՝ իրենց կողմից տարիներ շարունակ օգտագործվող տնակները /կամ տնակներից մնացած պիտանի շինանյութը/ իրենց տրամադրելու՝ նվիրաբերելու խնդրանքով, քանի որ տնակները մինչ օրս հաշվառված են համայնքապետարանի հաշվեկշռում: Հաշվի առնելով տնակների վաղեմության և պիտանելիության ժամկետները /տեղափոխման անհնարիությունը և աննպատակահարմարությունը/ առաջարկում եմ շահագործման ժամկետները անցած վերոնշյալ տնակները նվիրաբերել դրանք փաստացի տնօրինող Վահագնի գյուղի բնակիչներին:

Կից ներկայացնում եմ բնակիչների դիմումները:

Առդիր 17 դիմում:

**Ջեկուցող՝**



**Սուրեն Վարդումյան**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, [pambak.lori@mta.gov.am](mailto:pambak.lori@mta.gov.am)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 153-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՆԱԽԿԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ  
ՇԵՆՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ սպորտ դահլիճ շահագործելու նպատակով Արեն Սարգսի Ղումաշյանին տարածք հատկացնելու վերաբերյալ առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է.**


1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի նախկին մանկապարտեզի շենքի երկրորդ հարկից 49,85 քմ սպորտդպրոց շահագործելու նպատակով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ Արեն Սարգսի Ղումաշյանին օգտագործման տրամադրելուն:
2. Տարածքի վարձակալության ընդհանուր արժեքը մեկ տարվա համար սահմանել 30000/երեսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին Արեն Սարգսի Ղումաշյանի հետ կնքել անշարժ գույքի օգտագործման պայմանագիր:

Կողմ -11  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈՔՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 154-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է**.

1. Հաստատել Փամբակի համայնքապետարանի և նրա ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների սեփականության 2023թ-ի գույքագրման փաստաթղթերը՝ /կցվում են կազմված գույքագրման ցուցակները/:

2. Գույքագրման ընթացքում պակասորդ և ավելցուկ չի հայտնաբերվել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -11  
ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 155-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ԵՎ ՄՐՅՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն:

2. Աճուրդ-վաճառքով օտարվում է հողամասեր.

- 1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-0120-0028 ծածկագրով 0.493938 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- 2) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0244-0025 ծածկագրով 2.021277 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 2 300 000 /երկու միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- 3) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0251-0008 ծածկագրով 0,921428 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 1 050 000 /մեկ միլիոն հիսուն հազար/ ՀՀ դրամ:
- 4) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Բազում բնակավայրի 06-023-0250-0020 ծածկագրով 2,019914 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահող: Մեկնարկային գինը սահմանել 2 280 000 /երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:
- 5) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի 06-102-0041-0052 ծածկագրից 0,13016 հա գյուղատնտեսական

նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 60 000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-034-0116-0036 ծածկագրով 0,54591 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 110000 /մեկ հարյուր տասը հազար/ ՀՀ դրամ:

7) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Դեբեդ բնակավայրի 06-070-0350-0146 ծածկագրով 1,299367 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարք: Մեկնարկային գինը սահմանել 1 570 000 /մեկ մլն հինգ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդի լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Վարձակալության իրավունքով, գյուղ. գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետով տրամադրվում են հողամասեր

1) Համայնքային սեփականություն հանդիսացող 06-070-0339-0018 ծածկագրով 2.8028 հա գյուղատնտեսական նշանակության 1-ին կարգի խոտհարք՝ գյուղատնտեսական գործունեության նպատակով: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Կողմ -11

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 156-Լ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանին՝ **որոշում է**.

- Սահմանել Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11  
 ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
 ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
 ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
 ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
 ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԷԱՆԻԿ  
 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
 ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
 ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
 ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
 ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0      Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

## Կ Ա Ր Գ

### **ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ**

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը միջոցառումների համալիր է, որն ուղղված է Փամբակ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Փամբակ համայնքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կամ ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորության ապահովումը՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատումը.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատումը և դրանց փոխումը, փոխարինումը.

6) ներհամայնքային և միջհամայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ.

7) սույն մասով սահմանված բարեկարգման աշխատանքները և դրանց նկատմամբ վերահսկողությունը իրականացվում են համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան (գլխավոր հատակագծի առկայության դեպքում):

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ընդգրկում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ կառավարության 2003 թվականի «Կառուցապատման, նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N608-Ն և ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N91 որոշումներով նախատեսված կարգով՝

համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Փամբակ համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը համակարգող բաժնի (մասնագետի) կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Փամբակի համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Փամբակի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման (մասնագետի) կողմից սույն Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14. Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը համակարգող բաժնի (մասնագետի) կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը համակարգող բաժնի (մասնագետի) հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը սույն Կարգին համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը համարվում է համայնքի պարտադիր խնդիր: Համայնքը կազմված է մեկ կամ մի քանի բնակավայրերից, հետևաբար համայնքի բարեկարգման պարտադիր խնդրի իրագործումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարող է իրացվել ըստ էության հանրային սեփականություն հանդիսացող տարածքներում:

Ըստ էության համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքապետարանները և համայնքային ենթակայության համապատասխան կազմակերպությունները ունակ չեն ամբողջապես կազմակերպել և իրականացնել համայնքի բարեկարգման պարտադիր խնդրի լուծումը: Դրա համար առկա են մի շարք օբյեկտիվ պատճառներ, որոնք արտահայտվում են համայնքի սեփական ֆինանսական և մարդկային ռեսուրսների անբավարար վիճակով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի համաձայն, համայնքի ավագանին՝ սահմանում է համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը: Փաստորեն, օրենսդիրը համայնքի բարեկարգման պարտադիր խնդիրը ամբողջապես իրագործելու նպատակով, համայնքի ավագանուն վերապահել է պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն, որով համայնքում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների, ինչպես նաև ոչ բնակելի նշանակության տարածքների սեփականատերերի կամ տիրապետողների համար սահմանվելու են պարտադիր բարեկարգում իրականացնելու վարքագծի կանոններ (գործառույթներ և պարտավորություններ):

Անհրաժեշտ է արձանագրել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, մասնավորապես՝ 156-րդ հոդվածով սահմանվում են ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելը, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման

տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի սահմանված պարտադիր բարեկարգումը չիրականացնելը:

Օրենսդիրը անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի սահմանված պարտադիր բարեկարգումը չիրականացնելու մասով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կարգավորումներ է նախատեսել բացառապես Երևան համայնքի մասով, իսկ մնացած համայնքների մասով նախատեսել է վարչական պատասխանատվության միջոց՝ ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելու դեպքերի համար:

Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանող որոշմամբ սահմանվում են.

- ⇒ Պարտադիր բարեկարգման էությունն ու հասկացությունը.
- ⇒ Պարտադիր բարեկարգման օբյեկտները.
- ⇒ Պարտադիր բարեկարգման աշխատանքները.
- ⇒ Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության ընթացակարգերը.
- ⇒ Պարտադիր բարեկարգման պահանջները.
- ⇒ Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալի նկարագրությունը.
- ⇒ Որոշմամբ սահմանված կարգի խախտման դեպքում պատասխանատվության ենթարկելու հետ կապված կառուցակարգերը և այլն:

Օրենսդրության ուսումնասիրության և իրավահամեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի սահմանված պարտադիր բարեկարգումը ապահովելու համար, անհրաժեշտ է, որ համայնքի ավագանին ընդունի համապատասխան կարգը և պայմանները սահմանող որոշում:

Սույն հիմնավորմամբ նկարագրվող ավագանու որոշման ընդունման արդյունքում համայնքում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և ոչ բնակելի նշանակության տարածքների սեփականատերերի կամ տիրապետողների համար սահմանվելու են պարտադիր բարեկարգում իրականացնելու համապարտադիր վարքագծի կանոններ, որոնց կատարման նկատմամբ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները (լիազորված համայնքային պաշտոնատար անձը) կիրականացնեն վերահսկողություն, անհրաժեշտության դեպքում կիրառելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները:



**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՓԱՄՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՓԱՄՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» Փամբակ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՓԱՄՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՓԱՄՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓԱՄՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին» Փամբակ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Փամբակ համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am, pambak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 157-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փամբակ համայնքի  
ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2024 թվականի փետրվարի 15-ին, ժամը 13:00-ին:
2. Նիստը կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ. Փամբակ, 1-ին փողոց, 23 շենք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒԾԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ  
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ